

ՔԱՂՎԱԾՔ # 1

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան

14 ապրիլի 2016թ.

Հարց 2. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ 2015 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների և շահույթի բաշխման վերաբերյալ:

1. Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ զեկույցով ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահի ժ/պ Մարիամ Ամիրյանը: Ներկայացնելով Ընկերության 2015թ. տարեկան գործունեությունը՝ զեկույցողը ներկայացրեց Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները, ակտիվների, եկամուտների և ծախսերի կառուցվածքը, Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան շահույթի բաշխման առաջարկը՝ 2015 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 50,717,764.0 (հիսուն միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 963,637,510.0 (ինը հարյուր վաթսուներեք միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր տաս) ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Քվեարկության դրվեց Ընկերության 2015 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը հաստատելու հարցը:

Օրակարգի երկրորդ հարցի քվեարկության արդյունքները հետևյալն են.

կողմ՝ 100% ձայներին տնօրինող բաժնետեր

դեմ՝ չկա

ձեռնպահ՝ չկա:

Քվեարկության արդյունքում ժողովը միաձայն

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ընկերության 2015 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը՝ 2015 թվականի

գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 50,717,764.0 (հիսուն միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 963,637,510.0 (ինը հարյուր վաթսուներեք միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր տաս) ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Նիստը նախագահող՝

Արթուր Զավադյան

Նիստի քարտուղար՝

Անահիտ Սարգսյան